Հավելված 5

«ԷԱՃԱՊՁԲ ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ »* ծածկագրով

էլեկտրոնային աճուրդի հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ-6

ք. Երևան ____/_____/2022թ.

« Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ »-ը ի դեմս Արմեն Աբգարի Մուրադյան ի, որը գործում է « Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և « ԽԱՉՄԻՔ ՍՊԸ »-ը, ի դեմս տնօրեն Խաչիկ Միքայելյան ի, որը գործում է « ԽԱՉՄԻՔ ՍՊԸ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար։ Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով։

2. **ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի։

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից մինչև հրավերը հրապարակելը:*

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից

պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ձնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին

հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները։

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը։

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները։

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը։

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները։

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը։

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով։

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում։

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք։

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր։

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը։

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում

տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը։

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը։

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը։

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները։

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին։

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 19992698.40 AMD(տասնիննը միլիոն ինը հարյուր ինսուներկու հազար վեց հարյուր ինսունութդրամքառասուն լումա) ՀՀ դրամ , ներառյալ ԱԱՀ-ն։629[1]

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը։

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը։

730[2]

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով։ Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիներին։ Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են

ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

-

4. **ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ**

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված բնութագրով սահմանված օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

8 31[3]

5. **ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ**

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու

օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերորդական*) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի *0,5* (*զրո ամբողջ հինգ տասնորդական*) տոկոսի չափով:[9] [3][4]Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ։

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերորդական*) տոկոսի չափով։

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով։

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց։

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել։ Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը։ Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին։

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը։

Մասնակցի կողմից հայտով միևնույն ապրանքի համար մեկից ավել ապրանքային նշան, կամ մոդել ներկայացնելու դեպքում, պայմանագրի կատարման փուլում, պայմանագրով

սահմանված ողջ խմբաքանակի համար ապրանքի միանվագ և (կամ) փուլային մատակարարումը իրականացվելու է պայմանագրով սահմանված ապրանքային նշաններից կամ մոդելներից միայն մեկով՝ ըստ մատակարարի ընտրության: Պարտադիր պայման է ապրանքի նոր, չօգտագործված լինելը: Պայմանագրի ընդհանուր գինը 50 մլն. դրամին հավասար լինելու կամ գերազանցելու դեպքում, պայմանագրի կնքումը հաստատվում է հոգաբարձուների խորհուրդի կողմից: [5]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման

յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը։

11[6]

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են։

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա։ Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը։

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը

տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3,N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

__

13[8]

10. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան	**ԽԱՉՄԻՔ ՍՊԸ**
Հիմնադրամ	**ք.երևան Նանսենի 6շ**
ք. Երևան, Կորյունի 2	**ԱԿԲԱ բանկ**
Հայբիզնեսբանկ ՓԲԸ	**220463333983000**
11500166513800	**01031283**
01503448	**----------**
----------	**/ստորագրություն/**
/ստորագրություն/	**Կ.Տ**
Կ.Տ	

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2022.04.11 11:42:36 AMST

Digitally signed by VARDANYAN LAURA 6209921063
Date: 2022.04.09 23:05:07 AMT

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ։

[1]29 6 *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[2]30 7 *Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

[3]31 8 *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

[4]9 *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[5]10 *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

[6]11 *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[7]12 *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

[8]13 *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումներ» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 1
____/_____/2022թ. կնքված
ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ դրամ

Ապրանքի				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, մակնիշ, ֆիրմայի անվանում*	տեխնիկական բնութագիրը
2	30211280/4	2 Համակարգիչ 2	HP,LENOVO,ASUS ACER,DELL,Samsung,Softline, COMPAL,QUANTA COMPUTER, WISTRON,FOXCONN, OVO,ASUS ACER,DELL,Samsung,Softline, HP,LENOVO,ASUS ACER,DELL,Samsung,Softline	Պրոցեսոր, CPU՝ Intel Core i9-11900KF: Մայր սալիկ, Motherboard՝ ATX / Chipset: Intel Z590 / work with Intel 11th Gen Core, 10th Gen Core processor line with Intel Socket 1200 / 4 x DDR4 DIMM slots with a frequency of 2133 - 5333 MHz up to 128 GB / 7.1CH HDA, based on Realtek S1220A / up to 3 x PCI-E 16x and 1 x PCI-E 1x devices, connection of up to 3 x M2 solid-state drives and up to 6 x disk HDD SSD drives / 1 x RJ45 (LAN), 8 x USB 2.0, 8 x USB 3.2, S / PDIF, HDMI, Display Port: Օպերատիվ հիշողություն,2 x 16GB (DDR4 DIMM 288-pin / 3200 MHz / PC25600): Պատյան, Case՝ Mid Tower /

				ATX / 4 x 2.5" Bay 2 x 2.5"/3.5" Combo Bay / Expansion Slots 7 / 4 x 120 mm fans / 2 x USB 3.2 Gen1 Type-A, 3.5 mm jack (microphone), 3.5 mm jack (audio): Տեսաքարտ, PCI Express 4.0 / 8 nm / 8 GB GDDR6 / 14 Gbps / 256-bit / Digital Max Resolution 7680 x 4320 / Maximum Display Support 4 / 1 x HDMI, 3 x DisplayPort, HDCP Support Yes (2.3): Պրոցեսորի հովացուցիչ, CPU cooler՝ Liquid cooling / AM4/TR4 / LGA 115x/1366/2011/2011-3/2066 / 3x 120 mm fans / RGB: Համակարգի կրիչ, System disc՝ 3D MLC NAND / 512GB / 2.5" / SATA 3 / Buffer memory 512 MB / write speed: 530 MB/s; read speed: 560 MB/s / write IOPS: 90.000; read IOPS: 100.000: Հիշողության կրիչ, Work SSD՝ 3D MLC NAND / 1000GB / 2.5" / SATA 3 / Buffer memory 1000 MB / write speed: 530 MB/s; read speed: 560 MB/s / write IOPS: 88.000; read IOPS: 98.000: Հշողության կրիչ (2x8) 16 TB, Work HDD՝2 x 8TB (3.5" / SATA 3 / 256 МБ / 7200 rpm): Սնուցման բլոկ, Power Supply՝ 750 W, 80+ Gold, 8 x SATA Connectors, 3 x Molex Connectors, 4 x PCIe Connectors (6+2-Pin), 4+4+8-Pin CPU Power Connector, ATX Form Factor: Էկրաներ, Monitor x2՝ 2 x 27" / WLED / 16:9 / IPS / Anti-Glare / QHD 2560 x 1440 @ 75 Hz / 350 cd/m² / 1 000:1 / 16.7 million colors / 8 ms (gray-to-gray normal); 5 ms (gray-to-gray fast); 4 ms (gray-to-gray extreme) / 178°/178° / 2 x HDMI, 1 x DisplayPort, Audio line-out / Speakers – stereo, 3W: Տեսախցիկ, Webcam՝ 3 mega pixel, CMOS / 1080p/30 fps - 720p/ 30fps / Autofocus / Stereo mic / Lens type: Glass: Բարձրախոս, Speakers: Ստեղնաշար, Keyboard: Մկնիկ, Mouse՝ Wired / USB / Optical / 1000 dpi / Black: Կցված է 541c65fd.rar
9	30211230/2	9 Պրոցեսոր	Intel, Intel, Intel,	Միջուկների քանակ՝ 4 / Հոսքերի քանակ՝ 4 / համատեղելի մայրական սալիկներ՝ LGA 1151 / Տակտային հաճախականությունը ոչ պակաս 3.6 Գhq/Turbo Boost 4.2 Գhq /

			Intel	Պրոցեսորի cache հիշողություն՝ առնվազն 6 MB / Տեսաքարտ՝ ինտեգրված (Համարժեք intel UHD Graphics 630-ին): Կցված է 50cddf77.rar
13	44511330/2	13 Անլար պտուտակահան	OEM, OEM, OEM, OEM	Տեսակը՝ Պտուտակադարձիչ /Պտտման առավելագույն քանակը՝ արագություն1 առնվազն 450 պտ/ր, արագություն2 առնվազն 1900 պտ/ր / Պտտման առավելագույն ուժը՝ առնվազն 60 նմ /Ռեժիմներ և գործառույթներ՝պտույտ՝ աջ ու ձախ, LED ցուցիչ, 2 արագություն, շարժիչի արգելակում, ավտոմատ անջատվում է գերտաքացման ժամանակ / Սնուցում՝ մարտկոցային / Մարտկոցի հզորությունը՝ առնվազն 2 Ամպեր/ժամ / Ներառված է՝ փաթեթավորում պայուսակ, վերալիցքավորվող մարտկոց 2 հատ, լիցքավորիչ 1 հատ Կցված է b3b8eae5.rar
14	30232160/2	14 Թերմոտպիչ	Epson, Epson, Epson, Epson	Տեսակ՝Պիտակի տպիչ / տպման կետայնություն՝առնվազն 180 dpi / օպ.հիշողություն՝ առնվազն 50 պիտակ / Քարտրիջ/ Տոներ՝ ժապավենային քարթրիջ / համատեղելի ժապավենի լայնություն՝ 6 մմ,9 մմ,12 մմ,18 մմ, Լրացուցիչ ներառված է՝ 5 հատ 6մմ և 5 հատ 9 մմ-ոց ժապավեն համապատասխան մոդելի տպիչի համար Կցված է 050ec781.rar
15	42661400/4	15 Օպտիկամանրաթելային ուղիների զոդման կայան	GUYANG Store,TrunyenOpto,Hongmeng Laser,noptoelecs communication device Storeg Laser,Shenzhen Instrument Factory Store, GUYANG Store,TrunyenOpto,Hongmeng Laser,noptoelecs communication device Storeg Laser,Shenzhen Instrument Factory Store, GUYANG	Օպտիկամանրաթելային միջուկի հավասարեցման մեթոդ՝ (IPAAS) Եռակցվող մանրաթելերի տեսակը՝ SM (G.652), MM (G.651), DS (G.653), NZDS (G.655), SM (G.657 A2 / B2), SM (G.657 B3) Օպտիկամանրաթելերի ավտոմատ ճանաչում՝ SM(ITU-T G.652), MM(ITU-T G.651), DS(ITU-T G.653), NZDS(ITU-T G.655), SM(ITU-T G.657 A2/B2), SM(ITU-T G.657 B3) Միաժամանակ եռակցված մանրաթելերի քանակը՝ 1 զույգ Arc calibration՝ էլեկտրոդների մաշվածության ավտոմատ փոխհատուցում , ավտոմատ ճշգրտում նախորդ միացման արդյունքներից, ավտոմատ կարգավորում նախնական աղեղի երկայնքով: Կորուստ եռակցված միացության վրա՝ ոչ ավել SM: 0.02дБ, MM: 0.01дБ,

			Store,TrunyenOpto,Hongmeng Laser,noptoelecs communication device Storeg Laser,Shenzhen Instrument Factory Store, GUYANG Store,TrunyenOpto,Hongmeng Laser,noptoelecs communication device Storeg Laser,Shenzhen Instrument Factory Store	DS: 0.04дБ, NZDS: 0.04дБ, G.657: 0,02дБ Եռակցման գործընթացի վերահսկում՝ տեսողական և ապարատային Էլեկտրոդների ռեսուրս՝ առնվազն 18000 եռակցված միացում Մոնիտոր՝ գունավոր սենսորային 5.0 դյույմ Տեսախցիկներ՝ 2 CMOS տեսախցիկ X / Y առանցքի դիտում՝ 200X, MAX՝ 400X Մարտկոց՝ առնվազն 4700 мАч Պորտեր՝ USB(mini USB), մեքենայի ծխախոտի կրակայրիչից սնուցման միակցիչ 12 Վ Կոմպլեկտի մեջ մտնում է՝ AC ադապտեր / լիցքավորիչ ՝ 1 հատ. Կուտակիչ մարտկոց ՝ 1 հատ. Հոսանքի լար ՝ 1 հատ. Կոշտ պատյան մոնտաժային սեղանով՝ 1 հատ. Փոխադրման ժապավեն ՝ 1 հատ. Եռակցման մեքենայի կրող ժապավեն ՝ 1 հատ. Պահեստային էլեկտրոդներ ՝ 4 զույգ Ափսեներ կրիչների համար՝ 1 զույգ USB մալուխ՝ 1 հատ. Stripper ՝ 1 հատ. Ճշգրիտ կտրող սարք՝ 1 հատ. Անգլերեն լեզվով ներկայացված բոլոր չափորոշիչները միջազգային տերմիններ են: Կցված է 83d62df9.rar
16	30237240/3	16 Ցանցային տեսախցիկ	Tiananxun official store,tenveo official,Asecam oficial store,adhua Hikvision, Tiananxun official store,tenveo official,Asecam oficial store,adhua Hikvision, Tiananxun official store,tenveo official,Asecam oficial store,adhua Hikvision, Tiananxun official store,tenveo official,Asecam oficial store,adhua Hikvision	1 / 3.2" պրոգրեսիվ սկան CMOS ,H.264 միայնակ հոսք և MJPEG, առնվազն 30 կադր/վրկ 2048x1536 արագությամբ, Ցերեկային և գիշերային ռեժիմներ, Wide Dynamic Range Pro (WDR Pro), Վանդալակայուն համակարգ (մետաղական պատյան, IK10 + հուսալիության վարկանիշ) Մինի USB միակցիչ WiFi ադապտեր կամ կոշտ սկավառակ միացնելու համար, Ներկառուցված խոսափող և բարձրախոս, 360 ° և 180 ° համայնապատկերային տեսարան, Մեխանիկական շարժական մասեր չկան, Ներկառուցված SD (SD / SDHC) միակցիչ, Մառախուղակայուն, Վիրտուալ համայնապատկերային ուղեկցություն, Ավտո ուղեկցորդ, Ներկառուցված վեբ սերվեր՝ IE բրաուզերի միջոցով մոնիտորինգի համար՝ տարբեր օգտատերերի կողմից միաժամանակ վերահսկվելու տարբեր դիտանկյուններից, Երկկողմանի աուդիո, Նվագարկում ցանկացած դիտման

				տեսանկյունից և ցանկացած խոշորացումով, Անձնական հատվածների արգելափակում, Տեսողական ավտոմատացում, Տեքստի ծածկույթ, Վնասի ահազանգ, Վեբ ինտերֆեյս 31 լեզուներով, ONVIF արձանագրության աջակցություն, Համատեղելիություն GV-FE420/FE421, GV-FE4301 սարքավորումների հետ, ամրացման հնարավորություն պատին, առաստաղին, հատակին, առաստաղի մեջ,GV-NVR (Network Video Recorder) ver. 8.5.9.0(կամ ավելի բարձր) ծրագրային ապահովման հետ աշխատելու հնարավորություն Մարտկոցի հզորությունը՝ 9 Ah / Լարում՝ 6 V Նախատեսված APC-SUA750RMi1U մոդելի անխափան սնուցման սարքի համար Կցված է 27713507.rar
23	30232231/8	23 SSD կուտակիչ 2	KingSpeck,KingSpeck factori store,WALRAM, KingSpeck,KingSpeck factori store,WALRAM, KingSpeck,KingSpeck factori store,WALRAM, KingSpeck,KingSpeck factori store,WALRAM	Տեսակը՝ Ներքին / Հիշողությունը՝ 128 GB / Ինտերֆեյս՝ Msata / Ֆորմ ֆակտորը՝ SATA III / Կարդալու արագությունը՝ առնվազն 560 MB / s / Գրելու արագությունը՝առնվազն 150 MB / s / Հիշողության տեսակը՝ 3D NAND TLC Կցված է dee18196.rar
25	30232231/10	25 Արտաքին հիշողություն	Western Digital My Passport,transcend, Western Digital My Passport,transcend, Western Digital My Passport,transcend, Western Digital My Passport,transcend	Տեսակ՝ Արտաքին / Հիշողություն՝ 500 GB / Ինտերֆեյս՝ USB-C / Կարդալու արագությունը՝ առնվազն 540 MB / s / Հիշողության տեսակը՝ V-Nand Կցված է e76b72ec.rar
26	30237112/	26	iwongou,tattoo shiny	Սնուցման բլոկի տեսակը՝ ունիվերսալ Մուտքային լարումը՝ 100 -

	3	Սնուցման բլոկ 1	store,SUSWE official store,CYBER FPU, iwongou,tattoo shiny store,SUSWE official store,CYBER FPU, iwongou,tattoo shiny store,SUSWE official store,CYBER FPU, iwongou,tattoo shiny store,SUSWE official store,CYBER FPU	240 Վ / Ելքային լարումը՝ 15 - 24 Վ / ելքային հզորությունը՝առնվազն 75 Վտ / Փոխարինելի վարդակներ՝ 11 հատ Կցված է a8ec0ec2.rar
27	30237112/4	27 Սնուցման բլոկ 2	iwongou,tattoo shiny store,SUSWE official store,CYBER FPU, iwongou,tattoo shiny store,SUSWE official store,CYBER FPU, iwongou,tattoo shiny store,SUSWE official store,CYBER FPU, iwongou,tattoo shiny store,SUSWE official store,CYBER FPU	Կիրառություն՝ Համակարգչի / Ֆորմ ֆակտոր՝ ATX / փաստացի հզորություն՝առնվազն 500 W / Հովացուցիչներ քանակ՝ 1 / Մայրական սալիկի սնուցում՝ 24+4 pin / Տեղադրված հովացուցիչներ՝ 120 մմ / Միացումներ՝ 4 x SATA,2 x Peripheral (Molex) Կցված է e26a2458.rar
29	30236110/8	29 Օպերատիվ հիշողություն 2	TOP DREAM store,PUSKIL,WALLRAM,kllisre, TOP DREAM store,PUSKIL,WALLRAM,kllisre, TOP DREAM store,PUSKIL,WALLRAM,kllisre,	Տեսակ՝ DDR3 / Հիշողություն՝ 4 GB / Արագություն՝առնվազն 1600 MHz / Ֆորմ ֆակտոր՝ DIMM /Ռանգերի քանակ՝ single rank,2Rx8/ Կոնտակտների քանակ՝ 240-pin / Կցված է 0e7048c2.rar

			TOP DREAM store,PUSKIL,WALLRAM,kllisre	
31	30236110/10	31 Օպերատիվ հիշողություն 4	TOP DREAM store,PUSKIL,WALLRAM,kllisre, TOP DREAM store,PUSKIL,WALLRAM,kllisre, TOP DREAM store,PUSKIL,WALLRAM,kllisre, TOP DREAM store,PUSKIL,WALLRAM,kllisre	Տեսակ՝ DDR4 / Հիշողություն՝ 4 GB / Արագություն՝առնվազն 2133 MHz / Ֆորմ ֆակտոր՝ DIMM /Ռանգերի քանակ՝ single rank,2Rx8/ Կոնտակտների քանակ՝ 288-pin Կցված է 9ad70765.rar
33	30236110/12	33 Օպերատիվ հիշողություն 6	TOP DREAM store,PUSKIL,WALLRAM,kllisre, TOP DREAM store,PUSKIL,WALLRAM,kllisre, TOP DREAM store,PUSKIL,WALLRAM,kllisre, TOP DREAM store,PUSKIL,WALLRAM,kllisre	Տեսակ՝ DDR4 / Հիշողություն՝ 8 GB / Արագություն՝ առնվազն 2400 MHz / Ֆորմ ֆակտոր՝ DIMM /Ռանգերի քանակ՝ single rank,2Rx8/ Կոնտակտների քանակ՝ 288-pin Կցված է 81815d10.rar
34	32351120/3	34 Լապտոպ Screen1	ACER,DELL,FUJITSU,GATEWAY ,HP lenovo, ACER,DELL,FUJITSU,GATEWAY ,HP lenovo, ACER,DELL,FUJITSU,GATEWAY ,HP lenovo, ACER,DELL,FUJITSU,GATEWAY ,HP lenovo	Անկյունագիծ (դյույմ)՝ 15.6 " / Կետայնություն՝ 1366x768 / Կոնտակտների քանակ՝ 30-pin Կցված է 0e2d06eb.rar
35	32351120/4	35 Լապտոպ Screen2	ACER,DELL,FUJITSU,GATEWAY ,HP lenovo, ACER,DELL,FUJITSU,GATEWAY ,HP	Անկյունագիծ (դյույմ)՝ 15.6 " / Կետայնություն՝ 1366x768 / Կոնտակտների քանակ՝ 40-pin Կցված է 88b6fe5c.rar

			lenovo, ACER,DELL,FUJITSU,GATEWAY ,HP lenovo, ACER,DELL,FUJITSU,GATEWAY ,HP lenovo	
40	32421100/2	40 Ցանցային լար	3C-YEBBO store, 3C-YEBBO store, 3C-YEBBO store, 3C-YEBBO store	Զույգերի քանակը՝ 4 / մալուխի տեսակը՝ FTP / մալուխի կատեգորիա՝ cat 5e / մալուխի երկարություն՝ 305 մետրանոց կծիկ/ ծածկույթի նյութը՝ PVC / հաղորդավար նյութը՝ պղինձ / մեկուսիչ նյութը՝ պոլիէթիլեն / գույնը՝ սև կամ մոխրագույն Կցված է ab95bc37.rar
48	30232231/11	48 Կոշտ Ս կավառակ 1	Netac,KINGSPEC,XRAYDISC,WALRAM Factory Store, Netac,KINGSPEC,XRAYDISC,WALRAM Factory Store, Netac,KINGSPEC,XRAYDISC,WALRAM Factory Store, Netac,KINGSPEC,XRAYDISC,WALRAM Factory Store	Կոշտ սկավառակ,հատուկ նախատեսված թվային տեսաձայնագրող համակարգերում 24Ժ/7օր (Surveillance) HDD SATA3 ինտերֆեյս մինչև 6.0 ԳԲ/վ . Տեխնիկական բնութագիր: հիշողության ծավալը՝ 2 ՏԲ, չափը – 3.5", արագություն՝ 7200 պտտ/ր, քեշ հիշողության չափը՝ 256 ՄԲ, ինտերֆեյս՝ SATA 6 ԳԲ/վ, երաշխիք՝ 1 տարի Կցված է 28343709.rar
49	30232231/12	49 Կոշտ Ս կավառակ 2	Netac,KINGSPEC,XRAYDISC,WALRAM Factory Store, Netac,KINGSPEC,XRAYDISC,WALRAM Factory Store, Netac,KINGSPEC,XRAYDISC,WALRAM Factory Store, Netac,KINGSPEC,XRAYDISC,WALRAM Factory Store	Կոշտ սկավառակ,հատուկ նախատեսված թվային տեսաձայնագրող համակարգերում 24Ժ/7օր (Surveillance) HDD SATA3 ինտերֆեյս մինչև 6.0 ԳԲ/վ . Տեխնիկական բնութագիր: հիշողության ծավալը՝ 4 ՏԲ, չափը – 3.5", արագություն՝ 7200 պտտ/ր, քեշ հիշողության չափը՝ 256 ՄԲ, ինտերֆեյս՝ SATA 6 ԳԲ/վ, երաշխիք՝ 1 տարի Կցված է 27464319.rar

* Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն

արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:

ԳՆՈՐԴ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ

Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 2

Հայբիզնեսբանկ ՓԲԸ

11500166513800

01503448

Արմեն Աբգարի Մուրադյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2022.04.11 11:42:56 AMST

ՎԱՃԱՌՈՂ

ԽԱՉՄԻՔ ՍՊԸ

Հասցե՝ ք.երևան Նանսենի 6շ

ԱԿԲԱ բանկ

220463333983000

01031283

Խաչիկ Միքայելյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by VARDANYAN LAURA 6209921063
Date: 2022.04.09 23:07:18 AMT

Հավելված N 2
____/_____/2022թ. կնքված
ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ ծածկագրով պայմանագրի

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
					հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
2	հատ	2581899.60	5163799.20	2	Ք.Երևան,Կորյունի 2	2	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրում
9	հատ	78600.00	1572000.00	20	Ք.Երևան,Կորյունի 2	20	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրում
13	հատ	78499.80	156999.60	2	Ք.Երևան,Կորյունի 2	2	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրում
14	հատ	79500.00	79500.00	1	Ք.Երևան,Կորյունի 2	1	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից

							30 օրացուցային օրում
15	հատ	1989999.60	1989999.60	1	Ք.Երևան,Կորյունի 2	1	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրում
16	հատ	298000.05	2384000.40	8	Ք.Երևան,Կորյունի 2	8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրում
23	հատ	14799.96	147999.60	10	Ք.Երևան,Կորյունի 2	10	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրում
25	հատ	49000.20	98000.40	2	Ք.Երևան,Կորյունի 2	2	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրում
26	հատ	14808.00	740400.00	50	Ք.Երևան,Կորյունի 2	50	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրում
27	հատ	14800.00	2960000.40	200	Ք.Երևան,Կորյունի 2	200	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրում
29	հատ	12799.99	1023999.60	80	Ք.Երևան,Կորյունի 2	80	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային

							օրում
31	հատ	12800.04	128000.40	10	Ք.Երևան,Կորյունի 2	10	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրում
33	հատ	22500.00	450000.00	20	Ք.Երևան,Կորյունի 2	20	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրում
34	հատ	39600.00	396000.00	10	Ք.Երևան,Կորյունի 2	10	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրում
35	հատ	54199.92	270999.60	5	Ք.Երևան,Կորյունի 2	5	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրում
40	մետր	162.99	994299.60	6100	Ք.Երևան,Կորյունի 2	6100	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրում
48	հատ	39900.00	678300.00	17	Ք.Երևան,Կորյունի 2	17	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրում
49	հատ	63200.00	758400.00	12	Ք.Երևան,Կորյունի 2	12	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրում

* Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ	**ԽԱՉՄԻՔ ՍՊԸ**
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 2	**Հասցե՝ ք.Երևան Նանսենի 6շ**
Հայբիզնեսբանկ ՓԲԸ	**ԱԿԲԱ բանկ**
11500166513800	**220463333983000**
01503448	**01031283**
Արմեն Աբգարի Մուրադյան	**Խաչիկ Միքայելյան**
_____	**_____**
/ստորագրություն/	**/ստորագրություն/**
Կ.Տ	**Կ.Տ**
Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078 Date: 2022.04.11 11:43:12 AMST	Digitally signed by VARDANYAN LAURA 6209921063 Date: 2022.04.09 23:08:17 AMT

Հավելված N 3
____/_____/2022թ. կնքված
ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			Հնվ.	Փտր.	Մրտ.	Ապր.	Մայ.	Հուն.	Հուլ.	Օգս.	Սեպ.	Հոկ.	Նոյ.	Դեկ.	Ընդամենը
2	30211280/4	2 Համակարգիչ 2			5163799.20	5163799.20	5163799.20	5163799.20	5163799.20	5163799.20	5163799.20	5163799.20	5163799.20	5163799.20	5163799.20
9	30211230/2	9 Պրոցեսոր			1572000.00	1572000.00	1572000.00	1572000.00	1572000.00	1572000.00	1572000.00	1572000.00	1572000.00	1572000.00	1572000.00
13	44511330/2	13 Անլար պտուտակահան			156999.60	156999.60	156999.60	156999.60	156999.60	156999.60	156999.60	156999.60	156999.60	156999.60	156999.60
14	30232160/2	14 Թերմոտպիչ			79500.00	79500.00	79500.00	79500.00	79500.00	79500.00	79500.00	79500.00	79500.00	79500.00	79500.00

15	42661400/4	15 Օպտիկա մանրաթելայ ին ուղիների զոդման կայան			1989999.60	1989999.60	1989999.60	1989999.60	1989999.60	1989999.60	1989999.60	1989999.60	1989999.60	1989999.60	1989999.60
16	30237240/3	16 Ցանցային տեսախցիկ			2384000.40	2384000.40	2384000.40	2384000.40	2384000.40	2384000.40	2384000.40	2384000.40	2384000.40	2384000.40	2384000.40
23	30232231/8	23 SSD կուտակիչ 2			147999.60	147999.60	147999.60	147999.60	147999.60	147999.60	147999.60	147999.60	147999.60	147999.60	147999.60
25	30232231/10	25 Արտաքին հիշողություն			98000.40	98000.40	98000.40	98000.40	98000.40	98000.40	98000.40	98000.40	98000.40	98000.40	98000.40
26	30237112/3	26 Սնուցման բլոկ 1			740400.00	740400.00	740400.00	740400.00	740400.00	740400.00	740400.00	740400.00	740400.00	740400.00	740400.00
27	30237112/4	27 Սնուցման բլոկ 2			296000.40	296000.40	296000.40	296000.40	296000.40	296000.40	296000.40	296000.40	296000.40	296000.40	296000.40
29	30236110/8	29 Օպերատիվ հիշողություն 2			1023999.60	1023999.60	1023999.60	1023999.60	1023999.60	1023999.60	1023999.60	1023999.60	1023999.60	1023999.60	1023999.60
31	30236110/10	31 Օպերատիվ հիշողություն 4			128000.40	128000.40	128000.40	128000.40	128000.40	128000.40	128000.40	128000.40	128000.40	128000.40	128000.40
33	30236110/12	33 Օպերատիվ հիշողություն 6			450000.00	450000.00	450000.00	450000.00	450000.00	450000.00	450000.00	450000.00	450000.00	450000.00	450000.00
34	32351120/3	34 Լապտոպ			39600	39600	39600	39600	39600	39600	39600	39600	39600	39600	39600

		Screen1			0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
35	32351120/4	35 Լապտոպ Screen2			270999.60	270999.60	270999.60	270999.60	270999.60	270999.60	270999.60	270999.60	270999.60	270999.60	270999.60
40	32421100/2	40 Ցանցային լար			994299.60	994299.60	994299.60	994299.60	994299.60	994299.60	994299.60	994299.60	994299.60	994299.60	994299.60
48	30232231/11	48 Կոշտ Սկավառակ 1			678300.00	678300.00	678300.00	678300.00	678300.00	678300.00	678300.00	678300.00	678300.00	678300.00	678300.00
49	30232231/12	49 Կոշտ Սկավառակ 2			758400.00	758400.00	758400.00	758400.00	758400.00	758400.00	758400.00	758400.00	758400.00	758400.00	758400.00

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ԳՆՈՐԴ
Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 2
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
11500166513800
01503448
Արմեն Աբգարի Մուրադյան
_____
/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2022.04.11 11:43:28 AMST

ՎԱՃԱՌՈՂ
ԽԱՉՄԻՔ ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան Նանսենի 6շ
ԱԿԲԱ բանկ
220463333983000
01031283
Խաչիկ Միքայելյան
_____
/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by VARDANYAN LAURA 6209921063
Date: 2022.04.09 23:09:14 AMT

Հավելված N 4
____/_____/2022թ. կնքված
ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» «____» 20___ թ.
Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20__թ.
Պայմանագրի համարը՝ ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ-6
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «_____» «_____» 20___թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
2	2 Համակարգիչ							

	2							
9	9 Պրոցեսոր							
13	13 Անլար պտուտակահան							
14	14 Թերմոտպիչ							
15	15 Օպտիկամանրաթելային ուղիների զոդման կայան							
16	16 Ցանցային տեսախցիկ							
23	23 SSD կուտակիչ 2							
25	25 Արտաքին հիշողություն							
26	26 Սնուցման բլոկ 1							
27	27 Սնուցման բլոկ 2							
29	29 Օպերատիվ հիշողություն 2							
31	31 Օպերատիվ հիշողություն 4							
33	33 Օպերատիվ հիշողություն 6							
34	34 Լապտոպ Screen1							
35	35 Լապտոպ Screen2							
40	40 Ցանցային լար							
48	48 Կոշտ Սկավառակ 1							
49	49 Կոշտ Սկավառակ 2							

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց **Ապրանքը ընդունեց**

_____ _____

ստորագրություն **ստորագրություն**

_____	_____
ազգանուն, անուն	**ազգանուն, անուն**
Կ.Տ.	**Կ.Տ.**

Հավելված N 4.1
____/_____/2022թ. կնքված
ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ -ի (այսուհետ՝ Գնորդ) և ԽԱՉՄԻՔ ՍՊԸ (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ._____ -ին կնքված N ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ-6 պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով

Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)
2 Համակարգիչ 2	հատ	
9 Պրոցեսոր	հատ	
13 Անլար պտուտակահան	հատ	
14 Թերմոտպիչ	հատ	
15 Օպտիկամանրաթելային ուղիների զոդման կայան	հատ	
16 Ցանցային տեսախցիկ	հատ	
23 SSD կուտակիչ 2	հատ	
25 Արտաքին հիշողություն	հատ	
26 Սնուցման բլոկ 1	հատ	
27 Սնուցման բլոկ 2	հատ	
29 Օպերատիվ հիշողություն 2	հատ	
31 Օպերատիվ հիշողություն 4	հատ	
33 Օպերատիվ հիշողություն 6	հատ	
34 Լապտոպ Screen1	հատ	
35 Լապտոպ Screen2	հատ	
40 Ցանցային լար	մետր	
48 Կոշտ Սկավառակ 1	հատ	
49 Կոշտ Սկավառակ 2	հատ	

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____

ազգանուն, անուն

_____

Ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____

ազգանուն, անուն

_____

Ստորագրություն